ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ՎՏ/14.2/10764-2023

ՀՀ համայնքների ղեկավարներին

Հարգելի՛ գործընկերներ

Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործող ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) նոր փուլով հայտարարվում է ***ծրագրային հայտ-առաջարկների կանչ(մրցույթ)***:

Հիմնադրամի միջոցները միտված են աջակցելու ՀՀ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերին՝ առանցքում դնելով Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կայուն զարգացման 2030 օրակարգը և դրա շրջանակներում սահմանված կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ): Ծրագրերը պետք է նպաստեն ԿԶՆ-ների տեղայնացմանը համայնքային մակարդակում՝ 2030 օրակարգի սկզբունքներին համապատասխան:

ԿԶՆ-ների վերաբերյալ համայնքների իրազեկվածության բարձրացման և համապատասխան հմտությունների փոխանցման նպատակով ս.թ. մարտ ամսին ՀՀ 70 համայնքների (բացառությամբ Երևան քաղաքի) ներկայացուցիչների համար կազմակերպվել են տարեկան աշխատանքային պլանների և ԿԶՆ-ների միջև կապերի հաստատման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

Դրամաշնորհային միջոցների և համայնքների համաֆինանսավորման արդյունքում հնարավոր կլինի իրականացնել փոքր և միջին ծրագրեր տարբեր ոլորտներում՝

ենթակառուցվածքներ, ծառայություններ, սոցիալական պաշտպանություն, գյուղատնտեսություն և այլն՝ խթանելով ներառականությունը, համագործակցությունը և նորարարությունը: Հայտ-առաջարկների ներկայացման վերջնաժամկետը ս.թ. ***մայիսի 17***-ն է:

Խնդրում ենք ծանոթանալ Հիմնադրամի նկարագրությանն ու կից փաստաթղթերին և հորդորում օգտվել այս հնարավորությունից: Համայնքներին հետաքրքրող հարցերի պարզաբանման նպատակով ***ապրիլի 17-21***-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում են անցկացնել ***առցանց հանդիպումներ***, որոնց վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվեք: Հանդիպման արդյունավետությունն ու առարկայականությունն ապահովելու նպատակով խնդրում ենք նախապես պատրաստել հարցեր, քանզի քննարկումը ծավալվելու է հարցուպատասխանի ձևաչափով:

Միաժամանակ խնդրում ենք յուրաքանչյուր համայնքից նախատեսել մեկ ներկայացուցիչ, ով համայնքի ղեկավարի անունից կներգրավվի հետագա գործընթացում և պատասխանատու կլինի համայնքում Հիմնադրամի աշխատանքների կազմակերպման համար: Ներկայացուցչի տվյալները (անուն, ազգանուն, պաշտոն և հեռախոսահամար) խնդրում ենք մինչև ս.թ. ապրիլի 17-ը ուղարկել ՀՀ ՏԿԵՆ և ԳՄՀԸ հետևյալ էլ. փոստի հասցեներին՝ yeghiazar.davtyan@gmail.com և community-development-fund_AM@giz.de:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Восстановимая подпись

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: TERTERYAN VACHE 1201620635 Վ"Տերտերյան

Կատարող՝ Համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ, Ե. Դավթյան
Հեռ. 010515122